

ԼԵԶՎԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հրանուշ Ժորայի Թովմասյան

բ.գ.դ., պրոֆեսոր

ԲՊՀ, Լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոն

anushtovmasyan@yahoo.com

Ամփոփագիր

Հետազոտությունը նվիրված է հոգելեզվաբանության առանցքային թեմաներից մեկին՝ լեզվական ունակությանը: Հետազոտության նպատակն է վեր հանել լեզվական ունակության կառուցվածքաբովանդակային առանձնահատկությունները հոգելեզվաբանական քննության տեսանկյունից: Հոդվածում քննարկման առարկա են դարձել լեզվական ունակության ձևավորման, կառուցվածքային, բովանդակային և գործառման առանձնահատկությունները: Ուսումնասիրությունը կատարել ենք տեսական և էմպիրիկ հետազոտական մեթոդներից դիտման-զննման, ներհայեցման, համեմատության, վերլուծության, համադրության և ինդուկցիայի մեթոդներով: Արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ լեզվական ունակությունը բաղկացած է լեզվական մեխանիզմից, լեզվակրի լեզվական կառուցվածքից և խոսքային մեխանիզմից, որոնց բովանդակության ձևավորումը հասարակահեն է: Լեզվական մեխանիզմը լեզու յուրացնելու ունակություն է, խոսքային մեխանիզմը խոսքային գործունեություն իրականացնելու մեխանիզմն է: Լեզվակրի լեզվական կառուցվածքը քառաբաղադրիչ է՝ բաղկացած հնչյունական, բառային, քերականական և իմաստային բաղադրիչներից: Լեզվի յուրացման գործընթացում լեզվակրի լեզվական կառուցվածքի յուրաքանչյուր բաղադրիչ գիտակցության վերահսկողության և գիտակցական աշխատանքի գործունեության տեսանկյունից անցնում է գիտակցական վերահսկողության երեք փուլ՝ գործուն գիտակցություն, գիտակցական վերահսկողություն և անգիտակցական վերահսկողություն: Այսպես, խոսելիս լեզու սովորողի գիտակցությունը նախնական փուլում «արթուն» վիճակում ընտրում է այն միավորները, որոնք անհրաժեշտ են իր հաղորդակցական նպատակին հասնելու համար: Այս դեպքում խոսքագործունեությունը տեղի է ունենում գործուն գիտակցության պայմաններում: Երբ լեզու սովորողի՝ լեզվական միավորների ընտրության ժամանակ նա ընտրում է ճիշտ ձևերը, սակայն գիտակցությունը «արթուն» չէ, տեղի է ունենում խոսքագործունեության գիտակցական վերահսկողություն: Եվ երբ լեզու սովորողը ճիշտ ընտրում է լեզվական միավորները առանց գիտակցելու՝ ինչու, խոսքագործունեությունը տեղի է ունենում անգիտակցական վերահսկողության պայմաններում. սկսում է խոսքագործունեության ավտոմատացումը:

Հիմնաբառեր. լեզվական մեխանիզմ, լեզվակրի լեզվական կառուցվածք, խոսքային մեխանիզմ:

Ներածություն

Լեզվական ունակությունը հոգեֆիզիոլոգիապես պայմանավորված, սակայն հասարակական երևույթ է, որն ապահովում է լեզվական հանրույթի կողմից լեզվական միավորների յուրացումը, վերարտադրումը, պատ-

րակական երևույթ է, որն ապահովում է լեզվական հանրույթի կողմից լեզվական միավորների յուրացումը, վերարտադրումը, պատ-

շաճ ընկալումը և ձևավորումը [Залевская], [Field], [Menn]: Այսինքն՝ լեզվական ունակությունը մարդու կողմից լեզվի յուրացման և տիրապետման ունակությունն է:

Մարդու խոսքային վարքի ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս *անհատի լեզվական ունակությունը* պայմանականորեն տարանջատել հետևյալ երեք չափումների՝

1. *լեզվական մեխանիզմ* կամ (մայրենի և/կամ օտար) լեզու յուրացնելու ունակությունը,
2. *լեզվակրի լեզվական կառուցվածք* կամ լեզվակրի գիտակցության մեջ բնական լեզվի միավորների և դրանց՝ հաղորդակցման ժամանակ գործառելու նորմերի ու կանոնների մտավոր կառուցվածքը և կազմակերպումը,
3. *խոսքային մեխանիզմ* կամ խոսքային գործունեություն իրականացնելու մեխանիզմը, այն է՝ ձևավորել և ընկալել խոսք:

Լեզվական մեխանիզմի էության քննությունը հանգել է երկու իրարամերժ տեսակետների՝ *ռացիոնալիստների* և *էմպիրիկների* [Уланович,46]: Ռացիոնալիստները պնդում են, որ մարդը ծնվում է բնածին խորքային լեզվական գիտելիքներով, որն ապահովում է մարդու կողմից լեզվի յուրացումը: Էմպիրիկները կարծում են, որ լեզվական ունակությունը հասարակական երևույթ է, որը ձևավորվում է հասարակական գործոնների ազդեցության ներքո, մասնավորապես, մարդկանց՝ համատեղ կենսագործունեության ժամանակ նրանց հաղորդակցման պահանջի և հաղորդակցական նպատակների իրագործման արդյունքում:

Գիտնականներ Լ. Վիգոտսկու, Ա.Ն. Լեոնտևի և Ա. Լուրիայի [Выготский], [Леонтьев], [Лурия] կարծիքով (մարդու գիտակցության մեջ առկա) լեզվական կառուցները բնածին չեն: Դրանք մեզ շրջապատող օբյեկտիվ իրականության երևույթների և դ-

րանց փոխհարաբերությունների գիտակցական արտացոլման արդյունք են: Լեզվական ունակության զարգացումը պայմանավորված չէ որևէ բնածին լեզվական գիտելիքով. դրա ձևավորման և զարգացման նախադրյալը բացառապես հասարակական գործունեությունը և գործունեության կանոններն են: Լեզվական ունակությունը զարգանում է միմիայն արտալեզվական իրականության խթանների շնորհիվ:

Ա. Շախնարովիչը [Шахнарович, 186] կարծում է, որ մարդը ժառանգում է լեզվի յուրացման նախադրյալները ֆիլոգենետիկ (նախածննդյան, պատմական) եղանակով, որի շնորհիվ տեղի է ունենում օբյեկտիվ իրականության ճանաչումը և դրա արտացոլումը մարդու գիտակցության մեջ: Հասարակական լեզվի յուրացվում է մարդու կողմից օնտոգենետիկ (անհատական, հետծննդյան) զարգացման արդյունքում, այսինքն՝ մարդու գիտակցությունն արտացոլում է այն տիպային գործողությունների կաղապարները, որոնք ի հայտ են գալիս որոշակի (ներքին կամ արտաքին) պայմաններում և որոշակի ձևերով՝ անհատի մարդկային պահանջները բավարարելու համար:

Լեզվակրի լեզվական կառուցվածքի ուսումնասիրությունն ուղղված է բացահայտելու նրա «լեզվական պահոցի» բովանդակությունը և կառուցվածքը: Ներկայումս լեզվակրի լեզվական կառուցվածքում կարելի է տարանջատել լեզվական գիտելիքի մի քանի բաղադրիչ՝ *հնչյունական, բառային, քերականական* և *իմաստային բաղադրիչները*: Որպեսզի մարդը կարողանա լեզու յուրացնել և տիրապետել լեզվի, նրա գիտակցությունը պետք է պատշաճ կազմակերպի նրա լեզվական պահոցի կառուցվածքը: Ունենալով պատշաճ կառուցված լեզվական գիտելիքներ՝ մարդը կարող է դուրս բերել (տեղայնացնել) դրանք իր երկարաժամկետ հիշողության լեզվական

պահոցից և հաղորդակցվել, որը ժամանակի ընթացքում հանգեցնում է խոսքային գործունեության ավտոմատացման և այլընտրանքային խոսքային գործողությունների ճկուն կիրառման, այսինքն՝ համապատասխան հաղորդակցական իրավիճակում ճիշտ կողմնորոշվելու և լեզվի միջոցով պատշաճ արձագանքելու:

Երկլեզվյա անձանց (մեր դեպքում՝ ուսումնական միջավայրում օտար լեզու սովորող ուսանողների) գիտակցության զուգորդային (ասոցիատիվ) կառուցվածքի փորձառական ուսումնասիրությունները փաստում են, որ մայրենի լեզվի լեզվական միավորները՝ բառապաշարը, լեզվակրի գիտակցության մեջ ավելի լավ են համակարգված, ավելի կայուն իմաստային կապերի մեջ են այլ բառերի հետ, համապատասխան իմաստային դաշտերի սահմաններն ավելի հստակ են, և դրանց միջուկն ավելի կայուն է:

Օտար լեզվի բառապաշարի իմաստային դաշտերը պատշաճ կազմակերպված չեն, միավորների միջև կապերը հաճախ եզակի են, պատահական, իրավիճակային և անհատական: Երկլեզվյա անհատի գիտակցության մեջ օտար լեզվի բառապաշարի մեծ մասը ներկայացված է ինքնուրույն իմաստային դաշտերով, որոնք, ըստ իմաստի և միավորների բաշխման, անհատական բնույթ են կրում, ինչպես նաև չեն հարաբերակցվում մայրենի լեզվի համարժեք իմաստային դաշտերի կառուցվածքի և բովանդակության հետ: Անհատի լեզվական պահոցի կազմակերպման նշյալ խնդիրները, հատկապես՝ կապված բառապաշարի հետ, թույլ են տալիս բացատրել օտար լեզու յուրացնելու և տիրապետելու խնդիրները, համարժեք (որպես թարգմանության որակի չափանիշ) թարգմանություն կատարելու, ինչպես նաև երկլեզվյա համաժամանակյա բանավոր թարգմանության խնդիրները:

Ասվածն ավելի հստակ պատկերացնելու համար վերլուծենք իմաստային դաշտի մեկ օրինակ հայերենում և ռուսերենում: Այսպես, հայերենի *մեկնել* բառը մտնում է հայ լեզվակրի *հեռանալ/ ժամանել* իմաստային դաշտի մեջ: Դրա իմաստային շրջանակը և այլ բառերի հետ կապակցելիությունն ավելի ազատ է, քան ռուսերենում: Հայ լեզվակիրը կարող է ասել *մեկնել աշխատանքի, մեկնել արտերկիր, մեկնել հանգստի, մեկնել գործուղման, մեկնել հանդիպման, մեկնել խնջույքի, մեկնել համալսարան* և այլն: *Մեկնել* բառն ուղղակի նշանակում է որոշակի մեկնակետից գուրս գալ և ուղևորվել մեկ այլ վայր: Սրան հակառակ ռուսերենի համապատասխան իմաստային դաշտը, որի միավորները կրում են *examb* արմատը շատ ավելի լայն է և իմաստային առումով ավելի տարբերակված: Ուստի համարժեք թարգմանություն անելու կամ պատշաճ հաղորդակցվելու համար հայ լեզվակիրը պետք է լիարժեք պատկերացնի ռուսերենի նշյալ իմաստային դաշտը, այլապես, կառաջանան հացորդակցական խոտաններ: Ռուսերենի համապատասխան իմաստային դաշտը ներառում է *уехать, отъехать, выехать, съехать* բառերը, որոնք համապատասխանում են հայերենի *մեկնել* բառին: Օրինակ՝ հայերենի *Նա մեկնեց Մոսկվա* նախադասության ռուսերեն համարժեքն է *Он уехал в Москву: Նա արդեն մեկնել է* (եթե, նկատի ունենք, որ նա այլևս այստեղ չէ), ռուսերեն պետք է թարգմանենք *Он уже отъехал*: Պատկերացնենք մի իրավիճակ, երբ հյուրանոցում ադմինիստրատորն ասում է մաքրուհուն՝ *Կարող ես կարգի բերել 48 համարը, հաճախորդը մեկնել է*: Այս նախադասության ռուսերեն համարժեքն է՝ *Можешь обратиться в 48-м номере, клиент съехал*.

Ուստի մայրենի և օտար լեզուների համապատասխան իմաստային դաշտերը և դրանց միավորները ճիշտ կիրառելու համար անհրա-

Ժեշտ է հստակ պատկերացնել համապատասխան հաղորդակցական իրավիճակը և ունենալ բավարար լեզվական գիտելիքներ:

Լեզվակրի լեզվական կառուցվածքում առանձնացնում են լեզվական գիտելիքի մի շարք բաղադրիչներ:

1. *Հնչյունական բաղադրիչը* կազմված է լեզվի հնչյունների չափանմուշներից (էտալոն) և խոսքում դրանց առկայացման տարբերակներից: Չափանմուշն ամփոփում է թե՛ արտասանական, թե՛ լսողական գիտելիքներ: Օրինակ՝ հայ լեզվակիրն իր գիտակցության մեջ հստակ պատկերացնում է բաղաձայնների ընդհանրական, հնչության արտասանությունը և դրանց դիրքային արտասանական տարբերակները: Այսպես, հայ լեզվակիրը գիտի որ *գեպ, գարուն, գույնզգույն* բառերում գ-ն հնչում է [q], իսկ *կարագ, կարգ* բառերում [p]: Այսպես, *կարագ, կարգ* բառերը լսելիս նա կարողանում է ճանաչել, նույնականացնել համապատասխան բառը՝ չնայած նրան, որ հնչել է [p], այլ ոչ թե [q]: Նրա հնչյունական բաղադրիչը գործառում է որպես պատշաճ ընկալման երաշխավոր: Սա էլ իր հերթին հանգեցնում է ընկալման ավտոմատացման:

Սակայն, լեզու սովորողի դեպքում այդպես չէ, քանի որ նրա լեզվական ունակությունը չի ձևավորվել համապատասխան լեզվական հանրույթում և նրա՝ խոսքում հնչյունները տարբերակելու և նույնականացնելու գիտակցական երաշխավորը՝ հնչյունական բաղադրիչը, բավարար զարգացած չէ, որպեսզի կարողանա անսխալ տարբերակել խոսքում հնչող բառերի հնչյունային կազմը և նույնականացնել դրանք: Սա իր հերթին հանգեցնում է թերընկալման/ թյուրընկալման և հաղորդակցման խոտանների կամ ձախողման: Օրինակ՝ եթե անգլերեն խոսքում հնչում է *The education department has rejected the application*, որը հնչում է [ði ,edʒu'keɪʃn dɪ'pɑ:tmənt əz rɪ'dʒektɪd ði ,æprɪ'keɪʃn], ապա լեզու սովորողը,

որը յուրացնում է լեզուն ակադեմիական միջավայրում, իրական անգլալեզու խոսքային միջավայրից կտրված, կարող է պատշաճ չնույնականացնել [,edʒu'keɪʃn] և [əz] բառերը, քանի որ նրա հնչյունային բաղադրիչը ճանաչում է [,edʒɔ'keɪʃn] և [hæz] ձևերը, որը նա հիմնականում հանդիպել է անգլերեն լեզուն յուրացնելու պրակտիկայում, որից էլ կառաջանա թերըմբռնում:

2. «*Ներքին բառապաշարի*» ձևավորումը և կազմակերպումը մեր գիտակցության մեջ մեկ այլ մինչև վերջ չլուծված խնդիր է: Բառապաշարի բաղադրիչը կազմակերպված է իմաստային դաշտերի միջոցով, որոնք ունեն կենտրոն և եզրային գոտիներ: Կենտրոնում դաշտի ամենաուժեղ իմաստն արտահայտող միավոր(ներ)ը՝ բառ(եր)ն է, իսկ եզրային գոտիներում այդ իմաստը կրող, սակայն կենտրոնի հետ ավելի թույլ զուգորդվող բառերը: Օրինակ՝ հայ լեզվակիրը, *նարնջագույն* գույնը պատկերացնելիս, իր գիտակցության մեջ՝ որպես եզրային գոտու միավոր տեսնում է նաև *ծիրանագույնը*՝ որպես հայ լեզվակրի մշակույթի անքակտելի մաս: Սակայն, նույն նարնջագույն իմաստային դաշտում ոռու, անգլիացի կամ ցանկացած այլ լեզվի լեզվակիր երբեք չի տեսնի ծիրանագույնը, քանի որ դա ուղղակի բացակայում է այն մշակույթում, որտեղ նա յուրացրել է այդ լեզուն: Սրանով էլ բացատրվում է լեզվի յուրացման հասարակական-մշակութային նախադրյալը:

3. *Քերականական բաղադրիչն* ամփոփում է լեզվական միավորները կապակցելու ձևաբանական և շարահյուսական գիտելիքներ: Օրինակ՝ հայ լեզվակիրը գիտի, որ հայերենում նպատակը կարող է արտահայտել նպատակի պարագայի երկրորդական նախադասությամբ: Օրինակ՝ *Գնումներ եմ կատարում, որպեսզի վաղը մեկնենք լեռներ՝ ճամբարելու*: Հայ լեզվակիրն անգլերեն սովորելիս և խոսելիս հակված է օգտագործելու

երկրորդական նախադասություն՝ հայերենի հետ զուգորդային կապի պատճառով, և երկար ժամանակ է պահանջվում անգլերենին բնորոշ դերբայական կառույցները յուրացնելու և պատշաճ օգտագործելու համար, ինչպես հետևյալ նախադասության մեջ՝ *I am doing shopping to go camping in the mountains tomorrow.*

Նույն պատկերն է անգլերենի բարդ խնդրի (complex object) յուրացման դեպքում, քանի որ հայերենում չկա բարդ խնդիր: Հայ լեզվակիրն անգլերեն լեզվով թարգմանելիս կամ ուղղակի խոսելիս զուգորդման սկզբունքով հենվում է իր մայրենի լեզվի քերականական գիտելիքների վրա և բարդ խնդրի փոխարեն օգտագործում երկրորդական նախադասություն, որն անգլերենին բնորոշ չէ: Օրինակ՝ *Ուզում եմ, որ ինձ օգնես: I want you to help me.*: Հայ լեզվակիրը, որն անգլերեն է սովորում, որպես կանոն, երկար ժամանակ հայերենի հետ զուգորդման արդյունքում ասում է *I want that you help me.*

4. Լեզվակրի խոսքային վարքը կարծրատիպային է և տարբեր հաղորդակցական իրավիճակներում տարբեր կերպ է դրսևորվում: Արդյունքում ձևավորվում է նրա լեզվական կառուցվածքի *իմաստային բաղադրիչը*, որն ամփոփում է լեզվական վարքի այլընտրանքային կաղապարներ՝ կախված հասարակական կարգավիճակից, դերից և հաղորդակցական համատեքստից: Այսպես, խոսքային վարքի կրկնվող իրավիճակները հանգեցնում են կարծրատիպերի ձևավորման, որոնք նմանատիպ իրավիճակներում ստիպում են լեզվակրին օգտագործել տվյալ իրավիճակում և համատեքստում պատշաճ լեզվական միավորը, որը նաև համապատասխանում է լեզվակրի հասարակական դերին և կարգավիճակին տվյալ հաղորդակցական իրավիճակում: Օրինակ՝ մտերմիկ իրավիճակում որևէ լավ իրադարձության դեպքում հայ լեզվակիրը շնորհավորելիս կարող է ասել *Աչքդ լույս/ աչք-*

ներդ լույս: Մինչդեռ ավելի պաշտոնական իրավիճակում հայ լեզվակիրը կասի *Շնորհավորում եմ: Շնորհավորանքներս*: Այսինքն՝ մտերմիկ իրավիճակը ենթադրում է որոշակի հասարակական դեր և կարգավիճակ, որն էլ թույլ է տալիս նման կարծրատիպային ասույթի կիրառումը: Այսինքն՝ հայ լեզվակիրը գիտի, որ մտերմիկ համատեքստում այս ասույթը տեղին է, սակայն պաշտոնական իրավիճակում այս նույն նախադասությունն անհեթեթ է հնչում: Ըստ այդմ՝ համապատասխան հասարակական շփման փորձի հիման վրա լեզվակրի գիտակցությունը ձևավորում է լեզվական իրավիճակի իմաստային բաղադրիչը: Անգլերեն, ռուսերեն կամ այլ լեզվով նշյալ ասույթը թարգմանելիս հայ լեզվակիրը խնդրի առաջ է կանգնում, քանի որ նա չունի այն հասարակական փորձը, որի հիման վրա պետք է ձևավորվեր համապատասխան կարծրատիպը և ապա իմաստային բաղադրիչը: Ուստի հայ լեզվակրի օտար լեզուների իմաստային բաղադրիչը, որպես կանոն, թերի է, որի արդյունքում նա թարգմանում է ավելի չեզոք նախադասություններով, ինչպես օրինակ՝ *Congratulations! Поздравляю!*:

Լեզվական ունակության երրորդ չափունը՝ *խոսքային մեխանիզմը*, մարդու կողմից իր լեզվական ունակության առկայացումն է՝ մտածելու և հաղորդակցվելու նպատակով: Խոսքային մեխանիզմի գործառումը դրսևորվում է խոսք (տեքստեր) ստեղծելու և ընկալելու կարողության ձևով:

Խոսքային մեխանիզմը գործառում է գիտակցական և անգիտակցական մակարդակներով: Ասույթի իմաստը կարգավորում է *գործուն գիտակցությունը*: Խոսքային մեխանիզմի աշխատանքը *գիտակցական կարգավորման* մակարդակում ենթադրում է բառային միավորների (բառերի) գիտակցական ընտրություն՝ հաղորդակցական իրավիճակին,

հասարակական դերին և հաղորդակցվողներին կարգավիճակին համապատասխան:

Բառերի կապակցման ձևաբանական և շարահյուսական (քերականության) կանոնները գործառում են *անգիտակցական կարգավորման* մակարդակում:

Հնչյունային բաղադրիչի գործառումը բացարձակ *անգիտակցական* է:

Օտար լեզու յուրացնելիս լեզվական գիտելիքները կուտակվում են դրանց գործնական կիրառման արդյունքում, որը սկսում է գործուն գիտակցության մակարդակում: Լեզվի հնչյունային համակարգի յուրացումը փուլային է. նախ լեզու սովորողը յուրացնում է լեզվի հնչյունային առանձնահատկությունները գիտակցական և անգիտակցական մակարդակներում, ապա դրա լիարժեք յուրացման և տիրապետման արդյունքում հնչյունային միավորների և դրանց առանձնահատկությունների գործառումը և վերահսկողությունը դառնում է բացարձակ անգիտակցական: Օրինակ՝ երբ լեզու սովորողը յուրացնում է անգլերենի շնչեղության կորուստ երևույթը (loss of aspiration), ինչպես *speak, stake, skill* բառերում, նա հաճախ սխալներ է թույլ տալիս և անընդհատ ինքն իրեն գիտակցաբար վերահսկում է և ուղղում: Այն պահից, երբ այս երևույթի կիրառումը տվյալ լեզու սովորողի մոտ դառնում է ավտոմատ, սկսում է գործառել բացարձակ անգիտակցական վերահսկողությունը:

Քերականության յուրացումը տեղի է ունենում հետևյալ փուլային անցումով՝ գործուն գիտակցությունից դեպի գիտակցական վերահսկողության փուլ և ապա բացարձակ անգիտակցական վերահսկողության մակար-

դակ: Այսպես, օտար լեզու սովորողը նախ գործնական վարժությունների միջոցով, այսինքն՝ գործուն գիտակցական վերահսկողության միջոցով, հասնում է գիտակցական ինքնավերահսկողության, ապա բացարձակ անգիտակցական վերահսկողության՝ ավտոմատացման: Օրինակ՝ ժամանակաձևերի, հոդերի և այլն յուրացումն ու կիրառումը:

Բառային հմտության ձևավորումը տեղի է ունենում հետևյալ երկուղղություն հաջորդականությամբ՝ անցում համապատասխան բառային միավորների ընտրությունից (խոսքի ձևավորման ժամանակ) և դրանց ապաձևակազմման (խոսքի ընկալման ժամանակ), որը վերահսկվում է նախ գործուն գիտակցության մակարդակում, ապա անցում է կատարվում գիտակցական վերահսկողության մակարդակ: Օրինակ, եթե օտար լեզվի բառը բազմիմաստ է և դրա իմաստներից մեկն ավելի ընդհանուր կիրառություն ունի, իսկ մյուսը մասնավոր-մասնագիտական, ինչպես անգլերենի sentence (ընդհանուր՝ նախադասություն, մասնավոր-մասնագիտական՝ դատապարտում), ոուսերենի гриб (ընդհանուր՝ սունկ, մասնավոր-մասնագիտական՝ սնկային հիվանդության ժամանակ) բառերը:

Լեզվական ունակության կառուցվածքում այս չափումների (լեզվական մեխանիզմ, լեզվական կառուցվածք, խոսքային մեխանիզմ) տարանջատումը պայմանական է և տեղի է ունենում հետազոտական նպատակներով: Լեզվական ունակությունը զարգանում և գործառում է որպես մեկ, անքակտելի ամբողջություն:

Գրականության ցանկ

1. Field, J. Psycholinguistics: the key concepts. London and New York: Routledge. 2004.
2. Menn, L., Dronkers N.F. Psycholinguistics: Introduction and Applications, Second Edition, San Diego: Plural Publishing. 2016.
3. Выготский, Л. Мышление и речь. М.: Лабиринт, 1999.
4. Залевская, А. Введение в психолингвистику. М.: Издательство РГГУ, 2007.

5. Уланович, О. Психолингвистика: учеб. пособие. Минск: Издательство Гревцова, 2010.
6. Леонтьев, А. Н. Деятельность. Сознание. Личность. М.: Политиздат, 1975.
7. Лурия, А. Язык и сознание. М.: Издательство Моск. ун-та, 1979.
8. Шахнарович, А. Общая психолингвистика: Учебное пособие. М.: Издательство РОУ, 1995.

LINGUISTIC COMPETENCE: STRUCTURE AND CONTENT

Hranush Tovmasyan

Doctor of Philological Sciences, Professor

BSU, Chair of Linguistics and Theory of Communication

Abstract

The article dwells upon one of the key topics of psycholinguistics – linguistic competence from the perspective of its structural and content aspects. The study has been carried out by the theoretical-empirical research methods of observation, scientific experiment, introspection, comparison, analysis, synthesis, and induction. The outcomes of the research have singled out that linguistic competence is made up of three basic aspects – language mechanism, linguistic structure of the language speaker and speech mechanism. A central outcome of the research claims that the content of the linguistic competence is predominantly socially conditioned. Language mechanism is the language acquisition ability, speech mechanism is the mechanism of generate and comprehend speech. The linguistic structure of the language speaker is four-component, consisting of phonetic, lexical, grammatic, and semantic components. In the process of language acquisition, each component of the linguistic structure of a language learner goes through three stages of control by the consciousness: active consciousness, conscious control, and unconscious control. Thus, when speaking, the consciousness of the language learner, in the initial stage, is "awake" – it selects the units that are necessary to achieve his/her communicative goal. In this case, speech activity is monitored by active consciousness. When a language learner selects correct language units and forms, but the consciousness is not "awake", speech activity is monitored by conscious control. And when a language learner chooses correct language units and firms without realizing why, speech activity is under unconscious control – the automation of speech activity begins.

Keywords: language mechanism, linguistic structure of the language speaker, speech mechanism, active consciousness, conscious control, unconscious control

Ներկայացվել է՝ 22.10.2022թ.
Ուղարկվել է գրախոսման՝ 04.11.2022թ.